«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 99

«24» 03 2025թ. ք.Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ֆինանսների տնօրինման քաղաքականությունը և ընթացակարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ _____

(ստորագրություն)

Քարտուղար՝ ԴԱՎԻԹ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ _____

(ստորագրություն)

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ N 32Հ

«26» 02 2025թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

(նոր խմբագրություն)

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ֆինանսների տնօրինման բաղարականությունը և ընթացակարգը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ

(ստորագրություն)

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի
2025 թ. «[illegible]» N 326 հրամանով

1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1.1. Սույն ընթացակարգի գործունեության ոլորտը տարածվում է քոլեջի հաշվապահության և այն կառուցվածքային ստորաբաժանումների վրա, որոնք ներառվում են ֆինանսների կառավարման համակարգում:

1.2. Ֆինանսների տնօրինման ընթացակարգը որոշում է քոլեջի ֆինանսական ապահովման գործընթացների բովանդակությունը և հաջորդականությունը: Սույն ընթացակարգը սահմանում է տվյալ գործընթացի շրջանակներում իրավասությունների և պատասխանատվությունների բաշխումը:

1.3 Գորիսի պետական քոլեջի ֆինանսների տնօրինման քաղաքականությունը նախատեսում է ֆինանսական ռեսուրսների օգտագործումը քոլեջի ռազմավարությամբ սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար:

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՔՆԵՐԸ

Քոլեջի ֆինանսների կառավարումն ու բաշխումը ուղղված է ֆինանսների ռազմավարական նպատակների իրականացմանը:

Սույն քաղաքականությունը որոշում է քոլեջի ֆինանսների կառավարման սկզբունքները՝

- Համապատասխանություն (քոլեջի ռազմավարական նպատակներին),
- Ամբողջականություն (գործողությունների իրականացման տրամաբանական շարունակություն),
- Հստակություն (իրականացման ժամանակահատված, վերահսկում):

Քոլեջին ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝

1. Պետական ֆինանսավորումը,
2. Ուսանողների վարձավճարները:

3. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գորիսի պետական քոլեջի ֆինանսների տնօրինումն իրականացվում է որոշակի փուլերով՝

Պլանավորում – Քոլեջի ֆինանսնական պլանավորման հիմքում ընկած են քոլեջի ռազմավարական նպատակներն ու խնդիրները: Ֆինանսական պլանավորումը ներառում է քոլեջի բոլոր եկամուտների և ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունների պլանավորումը՝ քոլեջի զարգացումը ապահովելու համար:

Ֆինանսական պլանավորումն ուղղված է հետևյալ խնդիրների լուծման համար՝

- Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում
- Ֆինանսական հոսքերի օպտիմալ կառավարում:

Ռեսուրսների ապահովում – Քոլեջի ֆինանսական ռեսուրսների ապահովումն իրականացվում է ըստ հետևյալ քայլերի՝

- Նախնական բյուջեի պլանի նախահաշվի կազմում պատասխանատու անձանց կողմից,
- Ռեսուրսների օգտագործման ուղղությունների որոշում,
- Բյուջեի հաստատում և իրականացում:

Քոլեջի բյուջեն կազմվում է տարեկան կտրվածով, պլանավորվում և ներկայացվում է քոլեջի կառավարման խորհրդին՝ քննարկման և հաստատման:

Բյուջեի փաթեթը պատրաստում են տնօրենը և գլխավոր հաշվապահը և բաշխում ըստ քոլեջի կողմից իրականացված հիմնական ֆինանսական ապահովման գործառույթների:

Ռեսուրսների բաշխում և կառավարում – Ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է նախապես կայացված որոշումների և քոլեջի ռազմավարական գերակա ուղղությունների հիման վրա:

Քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- Աշխատավարձ
- Ուսումնական գործընթաց/կրթական ծառայություններ,
- Պետական բյուջեի վճարումներ
- Ընթացիկ ծախսեր՝ քոլեջի նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով:

Ռեսուրսների բաշխումը իրականացվում է տնտեսվարի կողմից՝ համապատասխան ստորաբաժանումների պահանջագրերի հիման վրա:

Ֆինանսական հաշվետվությունը պետք է պատրաստ լինի առնվազն հաշվետու տարվա ավարտին և ապահովի հետևյալ դրույթները՝

- Բյուջեի փաստացի ֆինանսական ցուցանիշների նախատեսում,
- Բոլոր եկամուտների և ծախսերի աղբյուրների ներառում,
- Տարեվերջյան մնացորդների կանխատեսում:

Ֆինանսական տարվա ամփոփում պետք է իրականացնել հետևյալ նպատակներին հասնելու համար և ներկայացնել կառավարման խորհրդի հաստատմանը:

Անհրաժեշտ է փաստել, որ՝

- Ծախսերն արդյունավետ են և անրաժեշտ նպատակներին հասնելու համար,
- Ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ,
- Առկա են բավարար ռեսուրսներ՝ աշխատանքները շարունակելու համար,
- Իրականացնել կրթական միջավայրի փոփոխությունների բացահայտում:

Վերոնշյալ արդյունքների հիման վրա է կազմվում հաջորդ ֆինանսական տարվա գործունեության նախահաշիվը:

Պատասխանատվություն – ֆինանսական համակարգի մշակման, ներդրման և կառավարման համար պատասխանատվությունն են կրում քոլեջի տնօրենը, հաշվապահությունը և կառուցվածքային այն ստորաբաժանումներն ու անձինք, որոնք պատասխանատու են տվյալ գործընթացի կազմակերպման և իրականացման համար: